**«Շենիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի**

# <<Պատանի բնապահպաններ>> խմբակի

**2023-2024 ուստարվա**

**տարեկան 68 ժամ**

**Թեմատիկ պլանավորում**

**7-րդ դասարան**

**Խմբակավար՝_ Ն. Կիրակոսյան**

## Բացատրագիր

Այժմ մարդկությունը հայտնվել է բնապահպանական բազմաթիվ խնդիրների առաջ,որոնցից ամենակարևորը Երկիր մոլորակի պահպանությունն է:Մեր ժամանակներում առանձնակի կարևորվում է բնապահպանական գիտելիքներով,Երկիր մոլորակի պահպանությամբ մտահոգված նոր մտածելակերպով մարդու կայացման խնդիրը:Երկիրը պահպանելու խնդիրը պետք է դառնա ապրելակերպ,մտածելակերպ՝ յուրաքանչյուրի համար:Ներկա հասարակության հույսը երեխաներն են՝ ապագա որոշումներ կայացնողները:Ահա թե ինչու ողջ աշխարհում այդքան մեծ դեր է հատկացվում մարդկանց էկոլոգիական դաստիարակությանը,դպրոցականների էկոլոգիական կրթությանը,ինչի իրականացմանն է ուղղված այս ծրագիրը:Ծրագիրը ստեղծված է հաշվի առնելով <<Հանրակրթության պետական չափորոշչի>> պահանջները: Սույն ծրագիրը նպատակահարմար է իրականացնել 6-8-րդ դասարաններում,տարեկան 68 ժամ ծավալով:

**Ծրագրի նպատակն է՝**

1.նպաստել անհատի էկոլոգիական կուլտուրայի, էկոլոգիական մտածելակերպի, գործելակերպի,շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության ձևավորմանը:

2.Նպաստել սովորողների այն գիտելիքների,կարողությունների,հմտությունների զարգացմանը,որոնք անհրաժեշտ են միջին դպրոցի աշակերտների մոտ համակարգված բնապահպանական աշխարհայացքի ձևավորման համար:

3.Զարգացնել սովորողների էկոկրթական մակարդակը,օգնել նրանց՝ ճիշտ գնահատել սեփական բնության ժառանգությունը և գիտակցել առողջ և կայուն շրջակա միջավայր ունենալու անհրաժեշտությունը:

1. **Ծրագրի խնդիրները՝**

- Սովորողների մոտ ձևավորել տեխնիկական և գիտական գործնեության կարողություններ
- Նպաստել նրանց ինքնուրույն և քննադատական մտածողության զարգացմանը

- Նպաստել միջառարկայական կապերի ամրապնդմանը
- Միջանձնային հարաբերությունների ոլորտում զարգացնել նրանց հաղորդակցական կարողությունները
- Ձևավորել ընդհանուր նպատակի շուրջ համախմբվելու,թիմային աշխատանք կատարելու կարողություններ
- Խթանել սովորողների քաղաքացիական ակտիվությունը:

## 2. Ակնկալվող վերջնարդյունքները՝

- Կկարողանա իր արարքների համար ստանձնել պատասխանատվություն
- Կհասկանա բնական ռեսուրսների դերը հասարակության կյանքում
- Կկարողանա հիպոթեզներ առաջ քաշել,ստուգել դրանց հավաստիությունը
- Կկարողանա էկոլոգիական հիմնախնդիրները դասակարգել ըստ բնույթի և ընդգրկման
- Կբացատրի ՀՀ-ում առկա էկոլոգիական հիմնախնդիրները
- Կպատկերացնի իր և ուրիշների դերը շրջակա միջավայրի առողջության պահպանման խնդրում
- Կմասնակցի շրջակա միջավայրի առողջացմանը նպաստող աշխատանքներին
- Կհասկանա աղտոտող տեխնոլոգիաների,բնակչության գերաճի,ընչաքաղց բնօգտագործման ներգործությունը շրջակա միջավայրի վրա
- Կկատարի կամավորության սկզբունքով աշխատանքներ իր բնակավայրի շրջակա միջավայրի առողջությունը պահպանելու և բարելավելու նպատակով
- Կգնահատի հայկական մշակույթի,ավանդական,սովորությունների դերը բնապահպանության գործում/օրինակ՝որսորդության արգելումը կենդանիների բազմացման շրջանում/

## 3.Հատկացվող ընդհանուր ժամաքանակ՝

Շաբաթական ՝ 2 դասաժամ / Տարեկան՝ 68 դասաժամ /

Ծրագիրը նախատեսված է 6-8-րդ դասարանների սովորողների համար:

**4.Բովանդակությունը՝**

| h/h | Թեմայի անվանումը | Ժամաքանակ |
|---|---|---|
| 1. | Մարդ և բնություն փոխհարաբերություններ /4 ժամ/ | |
| | Բնության վրա մարդկային հասարակության ներգործության պատմական փուլերը | 1 |
| | Էկոլոգիական հիմնախնդիրները,դրանց էությունը և ընդգրկումը/տեղական,տարածաշրջանային,համամոլորակային/ | 1 |
| | Տնտեսական առաջընթացը և շրջակա միջավայրի վատթարացումը | 1 |
| | ՀՀ բնապահպանական հիմնախնդիրների համառոտ բնութագիր | 1 |
| 2. | Հող /6 ժամ/ | |
| | Հողի բերրիությունը,նշանակությունը | 1 |
| | Հողի էրոզիայի առաջացման գործոնները և կանխարգելման միջոցները<br><br>Հողերի վատթարացումը որպես համամոլորակային հիմնախնդիր | 1<br><br>1 |
| | Քիմիական պարարտանյութերի,թունաքիմիկատների ներգործությունը շրջակա միջավայրի վրա | 1 |
| | Գյուղատնտեսության հիմնական բնապահպանական խնդիրները | 1 |
| | Հողի էրոզիան Հայաստանում | 1 |
| 3. | Անտառների հիմնախնդիրներ / 6 ժամ/ | |
| | Երկրագնդի անտառային ծածկույթը,կենսաբազմազանությունը և դրա պահպանությունը | 1 |

| | | |
|---|---|---|
| | Անտառների տեսակները/արևադարձային,բարեխառն և այլն / | 1 |
| | Անտառազրկման պատճառները և հետևանքները | 1 |
| | Անտառազրկման պատճառները և հետևանքները | 1 |
| | Ի՞նչ է անտառը:Ինչպես ծառ տնկել | 1 |
| | Հայաստանի Հանրապետության անտառների ապագան | 1 |
| 4. | Կենսաբազմազանություն /6 ժամ/ | |
| | Կենսաբազմազանության պահպանման անհրաժեշտությունը | 1 |
| | Արգելոցներ,արգելավայրեր,ազգային պարկեր,բնության հուշարձաններ | 1 |
| | ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներ | 1 |
| | Ի՞նչ է Կարմիր գիրքը,և ինչի՞ համար է այն անհրաժեշտ | 1 |
| | Կազմեք ձեր սեփական Կարմիր գիրքը | 1 |
| | Կազմեք ձեր սեփական Կարմիր գիրքը | 1 |
| 5. | Մթնոլորտի հիմնախնդիրներ /8 ժամ/ | |
| | Օդի աղտոտման աղբյուրները /արդյունաբերություն,տրանսպորտ,կենցաղ և այլն / | 1 |
| | Օդի աղտոտման աղբյուրները /արդյունաբերություն,տրանսպորտ,կենցաղ և այլն / | 1 |
| | Օզոնային թաղանթի քայքայում | 1 |
| | Ջերմոցային էֆեկտ | 1 |
| | Երկրագնդի կլիմայի փոփողությունը և դրա էկոլոգիական հետևանքները | 1 |
| | Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում | 1 |
| | Ինչպես կարելի է նվազեցնել տրանսպորտի ազդեցությունը կլիմայի վրա | 1 |
| | Ինչպես կարող եմ օգնել մոլորակին | 1 |
| 6. | Երկրագնդի ջրային պաշարների հիմնախնդիրներ / 8 ժամ/ | |
| | Ջրի աղտոտում,աղտոտման աղբյուրնեևը,աղտոտման կանխարգելում և վերահսկում | 1 |
| | Ջրի աղտոտում,աղտոտման աղբյուրնեևը,աղտոտման կանխարգելում և վերահսկում | 1 |
| | Քաղցրահամ ջրի հիմնախնդիրները,վերացման ուղիները | 1 |
| | Սևանա լճի հիմնախնդիրը | 1 |

| | | |
|---|---|---|
| | Մտածել՝ ինչպե՞ս կարելի է խնայել ջուրը | 1 |
| | Տան ջրի ծախսի հաշվարկի օրինակ | 1 |
| | Որքա՞ն գումար է ծախսում ձեր ընտանիքը տան ջրի համար | 1 |
| | Նվազեցնում ենք մեր ջրային հետքը | 1 |
| 7. | Կոշտ թափոններ և աղբի հիմնախնդիրներ / 14 ժամ/ | |
| | Ի՞նչ է նշանակում թափոն | 1 |
| | Թափոնների հիմնախնդիրը | 1 |
| | Թափոնների տեսակները | 1 |
| | Թափոնների տեսակները | 1 |
| | Թափոնների կայուն կառավարում | 1 |
| | Թափոնների  ուղղակի ազդեցությունը էկոհամակարգերի վրա | 1 |
| | Շրջանաձև տնտեսություն | 1 |
| | Թափոնների նվազեցումը/վերամշակում,վերօգտագործում/ | 1 |
| | Կոմպոստի պատրաստում | 1 |
| | Կոմպոստի պատրաստում | 1 |
| | Թղթի վերամշակում | 1 |
| | Թղթի վերամշակում | 1 |
| | Էկո պայուսակների պատրաստում | 1 |
| | Էկո պայուսակների պատրաստում | 1 |
| 8. | Էներգետիկ ռեսուրսներ,էներգիայի օգտագործում  /12 ժամ/ | |
| | Էներգիա:Էներգիայի աղբյուրների տեսակները | 1 |
| | Էներգիայի չվերականգնվող աղբյուրները և շրջակա միջավայրը | 1 |
| | Այլընտրանքային էներգիայի աղբյուրները և օգտագործումը | 1 |
| | Այլընտրանքային էներգիայի աղբյուրները և օգտագործումը | 1 |
| | Էներգախնայողությունը և շրջակա միջավայրի պահպանությունը | 1 |
| | Էներգարդյունավետություն և էներգախնայողություն | 1 |
| | Ածխածնային հետքի հաշվարկում | 1 |

| | | |
|---|---|---|
| | Էներգախնայողությունը բնակարաններում,փողոցում և այլուր | 1 |
| | Էներգախնայողությունը բնակարաններում,փողոցում և այլուր | 1 |
| | Էներգախնայողության ցուցապաստառի մրցույթ | 1 |
| | Էներգախնայողության ցուցապաստառի մրցույթ | 1 |
| | Որքա՞ն է մեր սննդի էներգիան | 1 |
| 9. | Էքսկուրսիաներ /2 ժամ / | 2 |
| 10. | Պահուստային / 2 ժամ / | 2 |
| | Ընդամենը՝ | 68 |

**Գրականության ցանկ**


- Մ.Դավթյան <<Տրջակա միջավայր և բնապահպանություն>>,Երևան,2010թ.
- Մ.Դավթյան,Ա.Կարապետյան <<Տրջակա միջավայր>> Երևան,1999թ.
- Ռ.Մայիլյան,Ս.Եղիազարյան,Ն.Դավթյան <<Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ>>, Երևան, 1992թ.
- Կարլա Ուեսլի <<Միտք սերմանի՛ր,ծառ տնկի՛ր>>,Երևան,2010թ
- <<Տապան էկո-ակումբ>> ՀԿ <<էներգիայի և ռեսուրսների օգտագործում>>,Երևան,2018թ.
- Գ.Մելիքյան,Կ.Ավետիսյան,Դ.Մնացականյան<<Էներգախնայողությոն,էներգաարդյունավետություն>>,Երևան,2021թ
- Ջեկույց<<Թափոնների կառավարումը Հայաստանում>>,Երևան,2020թ.
- <<Կլիմայական արկղիկ>>ուսումնական ձեռնարկ,Երևան,2021


**Նյութեր համացանցից**

- Բնապահպանության նախարարություն / [www.mnp.am/](http://www.mnp.am/)

- Բնապահպանություն / Yerevan.am /
- Բնապահպանական տեղեկատվական կայք / EkoNews.am /
- Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ / FPWC.am /
- Всеипный фонд дикой приподы / WWF.org /
- www.eionet.europa.eu/ [перевод] *Европейская сеть экологического наблюдения и информации*
- www.carboeurope.org/ [перевод] *Оценка земного баланса углерода*
- www.climate.kz *Координационный центр по изменению климата*
- www.globalcarbonproject.org/ [перевод] *Global Carbon Projec*
- www.igbp.net/ [перевод] *International Geosphere-Biosphere Programme*